

ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.

Գ. ԺԵՐԵԹԵՂԻ. — Մարդ — Առիծ, առասպելական պոեմա (պատկերազարդ). փոխադրեց Գալիթ Տէր Գալթեանց, 1895 թիֆլիզ. տպ. Մ. Հաբաձէի և ընկ.

Արաց Տին և նոր գրականութիւնը մեզ համար զեռ ևս մի անծանօթ աշխարհ է. Թէպէտ և ամօթ է մեզ համար այս խոստովանութիւնը, բայց աւելի լաւ է մեղքը խոստովանելը քան թէ թաղցնելը. Թէ ի՞նչ մեծ աղբյուրիւն կայ վրաց և հայոց ազգերի մէջ նոյն իսկ պատմական ժամանակներից սկսած, աւելորդ է այստեղ յիշատակելը, բայց թերեւ աւելորդ է շեշտել մեր այդ զանցառութիւնը, որպէս զի այդ մի խման լինի ձեռնհասների համար այդ աւելի քան կարեւոր գործի ձեռնարկելը, Յայտնի է ապաքէն, որ վրաց Տին գրականութեան մէջ հայկականի բազմաթիւ հետքերը կան, որոնց ուսումնասիրութիւնը պիտի լուսարանէ մեր միջնադարեան գրականութեան մութ կողմերը, Պակաս ուշադրութեան առարկայ է մեզ համար և վրաց նոր գրականութիւնը, որ այնքան հարուստ է բանաստեղծութիւններով, այդ բանաստեղծութիւնների փոխադրութիւնը պէտք է ցանկալի է համարել հէնց այն տեսակետով որ երկու ընտանիքից և ծակատագրակից ազգեր միմեանց աւելի ծանաչեն և հնարաւոր կացուցանեն այն թիւրիմացութիւնների բարձունքն, որ վերջին ժամանակներս տեղի են ունենում:

Գ. Ծերեթեղու այս վէպիկը մի գեղեցիկ բանաստեղծութիւն է փոխադրական իմաստով, նրա ձեն ու բովանդակութիւնը շատ ընտանի է հայ ժողովրդի համար, միայն ափսոս որ փոխադրողը ընտրի չափական լեզուն է պահպանել, որով բանաստեղծութեան արժանիքի մի մասը կորչում է, Թարգմանութիւնը խնամքով է կատարուած և հայերէնը անսպասելի կարգացուած է, Հրատարակութիւնն ևս մեր տպագրական պայմանների համեմատութեամբ կարելի է գեղեցիկ համարել, Յանձնարարում ենք մեր պատանեկական գրադարաններ կազմողներին:

Ա. ՊՈՒՇԿԻՆ. Կապիտանի աղջկե՛ք. Թարգմ. Յարութիւն Կարապետեան. Ալէքսանդրապոլ. 1895.

Կապիտանի աղջկե՛ք իրաւամբ Պուշկինի արձակ լեզուով գրուած ամենալաւ գործն է համարուում: Զնայելով որ Պուշկինից յետոյ մինչև մեր օրերը ուսաց պիպագրութիւնը այնպէս է յառաջադիմել ու զարգացել, որ նոյն իսկ եւրոպական գրականութեանց մէջ այսօր բաւականին պատուաւոր տեղ է գրաւած, այնու ամենայնիւ այժմ ևս Կապիտանի աղջկե՛ք հաճութեամբ կարդացուում է, Մանաւանդ գեղեցիկ է նորա լեզուն իւր գեղարուեստական պարզութեամբ և այն նկարչական ոճը, որ յատուկ է մեծ բանաստեղծին, Յայտնի է, որ ոչ մի ուսական ընթերցարան (хрестоматия) է հրատարակուում առանց այդ վէպից հանած ընդարձակ հատուածների:

Անշուշտ Կապիտանի աղջկե՛ք հայերէն թարգմանութիւնն էլ կը կարգացուի և այդ իսկ

պատճառով չենք կարող չցաւել, որ Կարապետեանի թարգմանութիւնը մեր թարգմանիչների մեծ մասի սովորական բոլոր թերութիւններն ունի, Ստրկարար ուսերէն բառերը հայերէն դարձնելը թարգմանութիւնն է հարկաւ և պ. Կարապետեանը դժբաղդարար այդպէս է վարուում: շատ տեղ էլ ուղղակի ուսերէնը չհասկանալու ապացոյցներ ենք գտնում այս թարգմանութեան մէջ, Բաւականանք մի քանի պատահական օրինակով մեր ասածն հաստատելու համար, Ի՞նչ է նշանակում օրինակ, ու տ ե լ է չ է ու զ ու ու մ — и к у ш а т ь — то не хочется. Գրինելը Սաւրիշին ասում է թէ Զուրինին պարտ է 100 ա. Я ихъ ему долженъ; պ. Կարապետ. Թարգմանում է. Ես նոցա պարտ եմ այդքան, նոցա ихъ թէ ему բառի թարգմանութիւնն է. ապա ինչի՞ տեղ է դրուած այդ քան բառը, Грѣхъ попуталь թարգմանած է «իմ մեղքից», Дьячиха — դարձել է սարկաւաց. դ ա չ ի. сталъ посматривать — ա չ բ բ տ ն կ ե ց . не въ укоръ буди тебѣ сказано — ե բ տ ի դ (?) չբ լինի ասել. въ разсѣяніи сталъ насвистывать — ցր ու ա ճ գր ու թ ե ե ա մ բ (?) սկսեց կայլն. дамское любопытство — տ ի կ ն ա յ ի ն (!) հետաքրքրութիւն. баба баваръ թարգմանուած է պ ա ա ա . командовать բառի համար հնարուած է հր ա մ ա ն ա տր ե լ , с у т к и — գիշերատիւ (?) Լ ի ն . Լ ի ն . Ո՞ր հայը կը հասկանայ թէ վ ա ա ա բ ա ն ն երը յ ա Ր դ ո վ վ ա ա ե լ ի ն է նշանակում (печи топятъ соломою). կամ մի թէ Իւան Կուզմիշի շուտ շուտ կրկնուող слышь ты — ն ի ն ձ լ ս ի բ է նշանակում Սոցա նման օրինակներ կարող էինք շատ բերել, բայց այսքանն էլ, կարծում ենք, բաւական է:

Յ. Յ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

**ՄԱՅՐ ԱԹՈՒԹՍ ՏՊԱՐԱՆՈՒՄ
ԼՈՅՍ ՏԵՍԱՆ**

Ա. ՄՕՔՈՍ. — Ժողովրդական վէպ. գրի առաւ Ս. Հայկունի. գինն է 25 կոպէկ:
Բ. ՊԱՐԶ ԲԱՐԱԶՆԵՐ. — Երկրորդ տետրակ. էմմանուէլ քահ. Նաղարեանց. գինն է 15 կ:

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿՏԵՄՆԵՆ

Ա.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԹԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԴԱՐԻԹԻՑԵՑԻՈՅ. Բ. տպագրութիւն:

Բ.

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ. — Նոր - Բայաղիտ քաղաքի և Գաւառին. աշխատասիրեց Մ. Արքեպիսկոպոս Սմբատեան:

Գ.

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ. — Նորին թարգմանութեան հանդերձ դիտողութեամբ. գրեց Նորայր Ն. Բիւզանդացի:

Դ.

ՍՈԿՐԱՏ. — Հրատարակութեամբ Մեսրոպ վ. Տէր Մովսիսեանի:

Ե.

ՅԱՃԱՆԱՊԱՏՈՒՄ. — Հրատարակութեամբ Ա. Տէր - Միքէլեանի:

ԱՂՕԹԱԳԻՐՔ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԳԵՍԱՒԱՐՅԱՆ ԵՒ ԲԱՏԱՏՐԵԱՆ

Ի Տէր Եովնանէս Ասագ Բանաստեղծ Մկրտան

Երրորդ Տպագրութիւն, սրբագրեալ եւ յաւելեալ

Կ. Պոլիս, Տպագրութիւն Գ. Պաղտատեան

1895

ԱՅՍ պատուական Աղօթագիրքն կը պարունակէ մեր Ս. Եկեղեցւոյ բովանդակ ժամերգութիւններն. Նախ՝ ԿԻՐԱԿԻ օրերու կարգը մինչև Ս. ՊԱՏԱՐԱԳԻ Խորհուրդը. և ապա ԼՈՒՐ օրերու ԱՐԵՒԱԳԱԼԻ ՃԱՇՈՒԻ ԽԱՂԱՂԱԿԱՆԻ. և ՀԱՆԳՍՏԵԱՆ (Եկեցցէի) ժամերգութիւններն ամբողջ, իւրաքանչիւրոց մէջ գտնուած Քարոզներուն և Աղօթքներուն Աշխարհաբար թարգմանութիւններովն և Ս. Պատարագի Խորհրդոյն բացատրութիւններովն, և այլ և այլ ձոխ ծանօթութիւններով:

Գրքին սկիզբը դրուած է այս անգամ Հոգեւոյս Տ. Ներսէս Ս. Պատրիարքի Թուղթն առ Աշխատասիրուն (ինչպէս կայր Ս. Տպագրութեան մէջ.) նոյնպէս և այժմուս Հոգեւորհայր Պատրիարքի Տ. Մատթէոս Ս. Արքեպիսկոպոսի մի Յորդորական գրութիւնն ուղղեալ առ Ժողովուրդն, որը բարձր վկայութիւնք են Աղօթագրքի գերազանց օգտակարութեանն, և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կարգադրութեանց և աւանդութեանց համեմատ հաւաքամութեամբ դասաւորուած և բացատրուած լինելուն:

Յետոյ կայ Աշխատասիրոյ Քաջանային խիստ կարեւոր Յառաջաբանն՝ յորում հրապարակական և Առանձնական Աղօթից վրայ պիտանի տեղեկութիւններ տալով, մեր Երանելի Նախահարց պատրաստած սքանչելի աղօթքներէն դուրս, օտար Աղօթագրքեր գործածելու անպատշաճութիւնն կը ցուցնէ, և կը յորդորէ վարժուիլ ընտելանալ մեր Աղգային Եկեղեցւոյ կարգադրութեանց և Աւանդութեանց, որպէս նաեւ Աղգային Գրական լեզուին, և սիրել զանոնք իրրեւ անգին Յիշատակներ մեր անմահանալի Նախնեաց, որ Քրիստոնէական կրօնքն այնքան սրբութեամբ մեզ աւանդեցին:

Այն ԱՂՕԹԱԳԻՐՔՆ աշխ. այսչափ ճոխութեամբ պատրաստուած, մեր Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ որդիք պիտի կարենան գործածել, թէ Եկեղեցւոյ մէջ իրրեւ ԺԱՄԱԳԻՐՔ, և թէ տուներու և ճանքորգութեանց մէջ իրրեւ ԱՂՕԹԱԳԻՐՔ, ուստի ամենուն քով գտնուելու արժանի:

Այս Երրորդ Տպագրութիւնն եւս յատուկ խնամով եղած է ընտիր թղթի վրայ՝ նրբաբանդակ պատկերներով զարդարեալ, և կը բաղկանայ 860 երեսներէ գեղեցիկ և վայելուչ կաղնով առանց գնոյ յաւելման: Կը գտնուի ի Ս. Էջմիածին Պ. Խորէն Խրիմեանի մօտ, և ի Թիֆլիզ Կեդրոնական գրաւթանոցն:

Պարզ լաթակազմ 1 Ռ. 50 Կ.

Ոսկեզօծ 2 .

Ոսկեզօծ կաշեկազմ 2 . 50